ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՆՄԱՆ(ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 07-ը մայիսի2024թ.
Ժամը 14^{30}

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան /ԳԱՊ/,
ՀՀ ՋՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության պահեստների, խողովակաշարերի և տեխնիկական միջոցների պլանավորման, ապահովման և շահագործման բաժնի պետի տեղակալ, փոխգնդապետ Հ. Քևնակսզյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳՎ ԹԱ վարչության ապահովման 2-րդ բաժնի պետ Է. Համբարձումյան,
ՀՀ ՋՈՒ ԹՎ ՀՎ և Վ ծառայության պահեստների, խողովակաշարերի և տեխնիկական միջոցների պլանավորման, ապահովման և շահագործման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Տ. Չալաբյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության գնումների կազմակերպման վարչության գնումների կազմակերպման 2-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Գ. Տերյան:

« ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Տերյան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.
2.«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.
3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.
4 Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսի չճանաչված մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Գ. Տերյան)

ՀՀ ՊՆ կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/6» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Մասնակցի անվանում
1	«Էլքիմիա» ՍՊԸ
2	Ա/Ձ Եփրեմ Մկրտչյան Արշակի
3	«ՏՆՄ» ՍՊԸ
4	«Ջի-Էս Քոնսալթինգ» ՍՊԸ
5	«ՄԱԺԷՎ» ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2 .«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտերում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

(Գ. Տերյան)

2.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը **www.armeps.am** կայքի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի:
2.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են, բացառությամբ «Էլքիմիա» ՍՊԸ-ի, որը գնային առաջարկ՝ Հավելված 2-ը չի կցել, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից այդ մասնակցի հայտը մերժվեց:
2.3 Մասնակիցների հայտերով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին (պահանջներին), բացառությամբ «ՏՆՄ» ՍՊԸ և «Ջի-Էս Քոնսալթինգ» ՍՊԸ: «ՏՆՄ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ում 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է «GOUS 8.247-2004 կամ արտադրող գործարանի համարժեք ՏՊ» Անհրաժեշտ է նշել կոնկրետ՝ կամ GOUS, կամ ՏՊ, բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: ՏՊ ներկայացնելու դեպքում, անհրաժեշտ է ներկայացնել նաև դրա կրկնօրինակը, իսկ «Ջի-Էս Քոնսալթինգ» ՍՊԸ կողմից ներկայացված հայտի Հավելված N 1.1-ում 4-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է վերոնշյալ ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծի 4-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրից տարբերվող ՏՊ: Ընթացակարգի հրավերով նախատեսվածից տարբերվող ՏՊ ներկայացնելու դեպքում, անհրաժեշտ է ներկայացնել նաև դրա կրկնօրինակը, ինչպես նաև որոշ պարամետրեր՝ լայնությունը, բարձրությունը, քաշը չի համապատասխանում հրավերի պահանջներին, 5-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է և GOUS, և ՏՊ: Անհրաժեշտ է նշել կոնկրետ՝ կամ GOUS, կամ ՏՊ, բացառելով այլընտրանքային մեկնաբանությունը: Վերոնշյալ ընթացակարգի հրավերով նախատեսվածից տարբերվող ՏՊ ներկայացնելու դեպքում, անհրաժեշտ է ներկայացնել նաև դրա կրկնօրինակը: Ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է հայտերի գնահատման նիստը և 07.05.24թ. ծանուցել վերոնշյալ մասնակիցներին ծանուցումը ստանալուց հետո սահմանված կարգով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Հայտերի գնահատման նիստին ներկա է «Ջի-Էս Քոնսալթինգ» ՍՊԸ լիազորված անձ Արմենակ Հովսեփյանը: Սահմանված ժամկետում մասնակիցները ներկայացրել են շտկումները, սակայն «Ջի-Էս Քոնսալթինգ» ՍՊԸ կողմից ներկայացրած շտկումներում 4-րդ չափաբաժնի ապրանքի տեխնիկական բնութագրում որոշ պարամետրեր՝ լայնությունը, բարձրությունը, քաշը չի համապատասխանում հրավերի պահանջներին: Ուստի գնահատող հանձնաժողովի կողմից այդ չափաբաժնի մասով մասնակցի հայտը մերժվեց:
Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Գ. Տերյան)

3.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել 4 մասնակիցներ

Հ/Հ	Ապրանքի անվանումը	Հ/Մ	Քանակը	Նախահաշվ. գումարը	Ընտրված կազմակերպության			Մրցույթին մասնակցող այլ կազմակերպությունների		
					անվանումը	գինը		անվանումները	գինը	
						առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով		առանց ԱԱՀ	ԱԱՀ-ով
1	Լուծիչներ /Լուծիչ/	կգ	100	80 100						
2	Ռետինափողրակներ /Ռետինե փողրակ ՄԲՍ ԴՈՒ 100/	մետր	300	2 457 000	«Ջի-Էս Քոնսալթինգ» ՍՊԸ	1995000	2394000	«ՄԱԺԷՎ» ՍՊԸ	2475000	2970000
3	Վառելիքի պոմպեր /Վառելիքի լցավորման կայանի մղիչ պոմպ/	հատ	10	1 395 000	«ՏՆՄ» ՍՊԸ	950000	1140000	«ՄԱԺԷՎ» ՍՊԸ	1080000	1296000
4	Կափույրներ և խողովակներ /Շնչառական կափույր ՍՄԴԿ-200/	հատ	10	3 360 000	Ա/Ձ Եփրեմ Մկրտչյան Արշակի	2230000	2676000	«Ջի-Էս Քոնսալթինգ» ՍՊԸ	2775000	3330000
5	Մակարդակի չափման սարքեր /Չափիչ մետր/	հատ	20	1 938 000	«ՏՆՄ» ՍՊԸ	1050000	1260000	«Ջի-Էս Քոնսալթինգ» ՍՊԸ	1450000	1740000
6	Լաբորատոր ապակյա արտադրանք /Էնգլերի կոլբա 125մմ՝ թորման համար/	հատ	30	2 700 000	«ՄԱԺԷՎ» ՍՊԸ	780000	936000	«Ջի-Էս Քոնսալթինգ» ՍՊԸ	2205000	2646000

3.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/: «Էլքիմիա» ՍՊԸ-ն գնային առաջարկ՝ Հավելված 2-ը չի կցել, ուստի գնահատող հանձնաժողովի կողմից այդ մասնակցի հայտը մերժվեց:

3.3 Մասնակիցների հետ բանակցություններ չեն վարվել:

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին չափաբաժնի մասով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/6» ծածկագրով ընթացակարգը չի կայացել համաձայն Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի (ոչ մի հայտ չի ներկայացվել):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/6» ծածկագրով ԳՀ ընթացակարգի ընտրված և այդպիսիք չճանաչված մասնակիցների որոշման մասին.

(Գ. Տերյան)

4.1 15.05.2024թ.՝ հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը «**ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/6**» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգում ըստ չափաբաժինների՝ 2-րդ չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվել «Ջի-Էս Քոնսալթինգ» ՍՊԸ, 3-րդ, 5-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից է ճանաչվել «ՏՆՄ» ՍՊԸ, 4-րդ չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվել Ա/Ձ Եփրեմ Մկրտչյան Արշակի, 6-րդ չափաբաժնով ընտրված մասնակից է ճանաչվել «ՄԱԺԷՎ» ՍՊԸ և վերջիններիս, անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

4.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/6» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացնելու վերաբերյալ

(Գ. Տերյան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-24-7/6» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Հ. Քևնակսզյան

Գնահատող Է. Համբարձումյան

Գնահատող Տ. Չալաբյան

Գնումները համակարգող՝ Գ. Տերյան